ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/9ՏՀ

ք. Երևան «23» սեպտեմբեր 2019թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի և Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[18]

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով[19]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6500000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[20], այդ թվում.

Չափաբաժին 1 – 4200000 (Չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

Չափաբաժին 2 – 2300000 (Երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

---

[18] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

[19] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

[20] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[23] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[24]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

---

[24] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ, Նորատուս
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02578338	Հ/Հ 220001150832000
Հ/Հ 900011002632	ՀՎՀՀ 00841725
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

Ծրագրի անվանումը	ՀՀ 2019թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ
Հատված	կմ148+300-կմ152+600
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ունենա ճարտարագետ-շինարարի որակավորում և տրանսպորտային ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության առնվազն 3 տարվա մասնագիտական փորձառություն): Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին: • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը: • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի: • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար: • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են

	անհրաժեշտ որակով և ծավալով: • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը): • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության ծառայության համար նշանակված տվյալ շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչի տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար): • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո 2 (երկու) օրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: Ընթացիկ հաշվետվությունները ընդգրկելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. Որոշման:

Ծառայությունների մատուցման ժամկետը	
սկիզբը	*ավարտը*
Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	
Ծրագրի անվանումը	ՀՀ 2019թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ
Հատված	կմ156+700-կմ160+200
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ունենա ճարտարագետ-շինարարի որակավորում և տրանսպորտային ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության առնվազն 3 տարվա մասնագիտական փորձառություն): Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին: • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը: • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի: • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան

	վճարումները իրականացնելու համար: • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով: • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը): • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության ծառայության համար նշանակված տվյալ շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչի տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար): • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո 2 (երկու) օրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: Ընթացիկ հաշվետվությունները ընդգրկելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,

• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 ա.ռ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. Որոշման:
Ծառայությունների մատուցման ժամկետը

սկիզբը	*ավարտը*
Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀԿՀՀ 02578338
Հ/Հ 900011002632

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ, Նորատուս
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀԿՀՀ 08417251

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
« 23 » սեպտեմբեր 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/9ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը
1	2	3	4
I.	**Հողային աշխատանքներ**		
1	V 10զ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ^3	340
2	V 10զ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ, բարձում էքսկավատորով (0.65մ^3), տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^3	190
3	III10դ գրունտի մշակում և տեղափոխում պահուստից 3.0կմ-ից լիցքի իրականացման համար	մ^3	540
4	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ^3	1070
5	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ^3	510
II.	**Ճանապարհային պատվածք**		
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերաօգտագործում սառը վերամշակման եղանակով հմիջ.=20սմ	մ^2	34279
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	35052
3	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ^2	34279
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ^2	34279
III.	**Ուղիներ**		
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	76
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	745
3	Տաք,մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ^2	736
IV.	**Մուտքեր**		
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	71.15
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	695.7
3	Տաք,մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ^2	687.0
V.	**Կողնակներ**		
1	Կողնակների խոտածածկի մաքրում մեխանիզմով, բարձում էքսկավատորով (0,65մ^3), տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ^3	100
2	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից միջինը 3.0կմ-ից կողնակների իրականացման համար	մ^3	1701

3	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=12սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ³	1701
4	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	մ²	14177
VI.	**Գոյություն ունեցող խողովակների մաքրում, գլխադիրների, բացվածքների իրականացում և նորոգում**		
1	Գոյություն ունեցող ջրթող խողովակների մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 3.0կմ/ 6 հատ/	մ³	24
2	Գլխադիրների իրականացում, բարձրացում միաձույլ բետոնով B15 / 4 հատ/	մ³	1.9
3	Բացվածքների իրականացում միաձույլ բետոնով B15 /2 հատ/	մ³	0.7
4	Վաքի իրականացում միաձույլ բետոնով B15/1 հատ/	մ³	0.6
5	Գլխադիրների սվաղում և ներկում	մ²	10.5
VII.	**Փոքր կամուրջներ**		
Ա.	**ՊԿ39+50**		
1	Պարապետերի նորոգում միաձույլ բետոնով B15	մ³	0.4
2	Պարապետի սվաղում և ներկում	մ²	24.5
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	94
Բ.	**ՊԿ37+31**		
1	Մուտքի և ելքի բացվածքների նորոգում միաձույլ բետոնով B15 /4հատ/	մ³	2.8
VIII.	**Ճանապարհի կահավորում**		
Ա.	**Մետաղական արգելափակոցներ**		
1	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների վնասված հեծանի ապատեղակայում, բարձում, տեղափոխում բազա	գծ.մ	24.0
2	Նոր հեծանի տեղակայում գոյություն ունեցող մետաղական հենասյուների վրա (պողպատե թիթեղ δ=4մմ)	գծ.մ	24.0
3	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ներկում /146 գծ.մ/	տոն	3.50
4	Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով (սյուների քանակը -163հատ, վերջնական տարր -18հատ/180կգ; անկյունագծային կապ 108 հատ/576.45կգ, պողպատե թիթեղ d =4մմ)	գծ.մ	430.0
Բ.	**Բետոնե արգելափակոցներ**		
1	Եզրապատերի նորոգում միաձույլ բետոնով B15	մ³	2.5
2	Եզրապատերի սվաղում և ներկում	մ²	90
Գ.	**Ազդանշանային սյուներ**		
1	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	266
Դ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**		
	1.1	կմ	1.546
	1.5	կմ	1.922
	1.6	կմ	0.832
	1.8	կմ	0.253
	1.2.1	կմ	8.347

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը
1	2	3	4
I.	**Ճանապարհային պատվածք**		
1	Փոսային նորոգում h=3-5սմ	մ^2	1413
2	Փոսային նորոգում h=5-12սմ	մ^2	2148
3	Փոսային նորոգում հիմքով		
ա.	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	2052
բ.	Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ	մ^2	2052
4	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ	տոն	817.6
5	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ^2	33136
II.	**Կողնակներ**		
1	Կողնակների խոտածածկի մաքրում մեխանիզմով, բարձում էքսկավատորով (0,65մ^3), տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ^2	9920
2	Կողնակների ամրացում կոպճային շերտով h=10սմ	մ^2	10257
III	**Մայթեր**		
1	Մայթերի եզրերի բուսականության քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^2	523
2	Գոյություն ունեցող տեղաշարժված եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	159
3	Գոյություն ունեցող մայթի քայքայված ա/բ ծածկույթի քանդում բարձում, տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ^2	708
4	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	174
5	Ավազահատիկ ա/բետոն h=3սմ	մ^2	660
IV	**Թեքուղիներ**		
1	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	82
2	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա /խորացված դիրքով/	գծ.մ	82
3	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում թեքուղիներում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	84
V.	**Ուղիներ**		
1	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ^2	մ^2	702.0
2	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ^2	1705
VI.	**Մուտքեր**		
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ^3	1.10

2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	14.0
3	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	14.2
4	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	311.4
5	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	382.0
6	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	1175.0
VII.	**Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում**		
1	Տարբեր բացվածքներով խողովակների մաքրում ձեռքով/8հատ/, բարձում և տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	110
2	d=1.0մ ե/բ խողովակների գլխադիրների նորոգում միաձույլ բետոն B15	մ³	0.96
3	d=1.0մ ե/բ խողովակի գլխադիրի թևերի վերականգնում միաձույլ բետոնով B12.5	մ³	4.5
4	Նույնը d=1.25մ ե/բ խողովակի համար	մ³	1.5
5	Նույնը 2x2մ բացվածքով ե/բ խողովակի համար B15	մ³	1.8
6	d=1.0մ ե/բ խողովակների վաքերի իրականացում միաձույլ բետոնով B12.5	մ³	12.5
7	Նույնը d=1.25մ ե/բ խողովակի համար	մ³	3.2
8	Նույնը 2x2մ բացվածքով ե/բ խողովակի համար B15	մ³	3.8
VIII	**Կողային առուների մաքրում**		
1	Կողային առուների(III8վ գրունտ) մաքրում էքսկավատորով (0.3մ³), տեղափոխում լցակույտ 3.0կմ	մ³	778.0
IX.	**Գոյություն ունեցող վաքերի քանդում**		
1	ՊԿ14+22-ՊԿ15+40 ձախից և ՊԿ14+14-ՊԿ15+40 աջից գոյություն ունեցող քայքայված բետոնե վաքերի/Ճ-1-20/ քանդում էքսկավատորով (0.65մ3), բարձում, տեղափոխում լցակույտ 3.0կմ	գծ.մ	244.0
X.	**Ճանապարհի կահավորում**		
Ա.	**Ճանապարհային նշաններ**		
1	Առավելության	հատ	21
2	Հատուկ թելադրանքի/1 սյան վրա ամրացվում է 2 նշան/	հատ	12
Բ.	**Արգելափակոցներ**		
1	Գոյություն ունեցող ազդանշանային սյուների ապատեղակայում, տեղափոխում լցակույտ 3.0կմ	հատ	134.0
2	C1 տիպի նոր պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	244.0
3	Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով (սյուների քանակը -142հատ, վերջնական տարր -6 հատ/60կգ; անկյունագծային կապ 36հատ/192.15կգ, պողպատե թիթեղ d =4մմ)	գծ.մ	467
	ավազակոպիճ	մ³	4.62
4	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ներկում	տոն	4.0
Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**		
	1.1	կմ	0.527
	1.5	կմ	2.680
	1.6	կմ	0.295
	1.8	կմ	0.335
	1.2.1	կմ	4.679

	1.2.2	կմ	1.90
	1.14.1	մ^2	66.24

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011002632

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ, Նորատուս
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/9ՏՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » _____2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/9ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
23.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/9ՏՀ պետական գնման պայմանագրի

ք. Երևան **<< 15>> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 03-ի թիվ 1331-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 23.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/9ՏՀ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02578838	Հ/Հ 220001150832000
ՀՀ 900011002632	ՀՎՀՀ 08417251
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/9ՏՀ գնման պայմանագրի
«15» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 և -1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71351540/66	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ										4 200 000	4 200 000	4 200 000	**4 200 000**
2	71351540/67	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ										2 300 000	2 300 000	2 300 000	**2 300 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011002632

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22000115083200
ՀՎՀՀ 08417251

/ստորագրություն/